ՏԵՂԵԿԱՆՔ

«ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՊԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 31. Պետական և ոչ պետական մարմինների կողմից ապաստան հայցողների և փախստականների իրավունքների երաշխավորումը

1. Ապաստան հայցողների և փախստականների՝ սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված բոլոր իրավունքները հարգվում են Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բոլոր մարմինների կողմից:

2. Սույն օրենքի 29-րդ և 30-րդ հոդվածների համաձայն՝ ապաստան հայցողներին և փախստականներին տրված անձը հաստատող փաստաթուղթը հիմք է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրենց իրավունքներից օգտվելու համար:

3. Լիազոր մարմինն իր իրավասության շրջանակներում աջակցում է ապաստան հայցողներին և փախստականներին այլ մարմինների հետ հարաբերություններում նրանց՝ սույն օրենքով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով տրված բոլոր իրավունքների պաշտպանության հարցում:

4. Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ կամ ժամանակավոր պաշտպանություն ստացած անձանց հայաստանյան հասարակությունում ինտեգրումը խթանելու նպատակով սույն օրենքի 33-րդ, 34-րդ, 38-42-րդ հոդվածներով սահմանված լիազոր մարմիններն իրենց իրավասությունների շրջանակներում պետք է իրականացնեն սույն օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ինտեգրման ծրագրեր:

(31-րդ հոդվածը լրաց. 16.12.15 ՀՕ-193-Ն)

«**Հոդված 31 1 Հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեությանը**

1. Հասարակական կազմակերպությունները կարող են իրականացնել հասարակական վերահսկողություն ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնի գործունեության նկատմամբ: Սույն հոդվածի իմաստով հասարակական վերահսկողությունը ներառում է ապաստան հայցողների կենսաապահովման պայմանների, ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակության ներքին կարգապահական կանոնների պահպանման և ապաստան հայցողների այլ իրավունքների ապահովման նկատմամբ վերահսկողական գործառույթները:

2. Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողությունն իրականացվում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարի հաստատած՝ մրցութային կարգով ընտրված, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմված հասարակական դիտորդների խմբի միջոցով:

3. Հասարակական դիտորդների խմբի անդամի լիազորությունների ժամկետը երեք տարի է: Հասարակական դիտորդների խմբի անդամների թիվը չի կարող գերազանցել քսանմեկը:

4. Ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում հասարակական վերահսկողության իրականացման կարգը, ինչպես նաև հասարակական դիտորդների խմբի կազմը և իրավասությունների շրջանակը սահմանում է ներքին գործերի բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը:»: